ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա
11 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ և 42-րդ կետերով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 04-ի N 1198-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում իրականացված 2024 թվականի համայնքային մասհանումների ծախսման ծրագրի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ(21)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ _____
ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ _____
ԳՈՌ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____
ՋՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ _____
ՎԱՀԱՆ ՂԱՋԱՐՅԱՆ _____
ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ _____
ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
ԱԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____
ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱՐԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2025թ. փետրվարի 11

ք. Կապան

Հավելված
Կապան համայնքի ավագանու
« 11 » փետրվարի 2025թ N 11-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան համայնքի Արծվանիկ ազդակիր բնակավայրում

Համայնքային մասհանումների ծախսման իրականացված ծրագրի մասին

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4.1-ին կետով սահմանված՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) անվանումը

«Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի խմելու ջրամատակարարման ապահովում»

1. ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը – Կապան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի N 81-Ա որոշում՝ 2024 թվականի հունիսի 26-ի N 80-Ա որոշման փոփոխություններով և <<Հայաստանի Հանրապետության 2024 թվական իպետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության 2023 թվականի դեկտեմբերի 07-ի ՀՕ-386-Ն օրենք:

1. Ծրագրի սկիզբը և ավարտը - Շինարարական աշխատանքների սկիզբ՝ 09 հունիս 2024թ, ավարտը՝ 09 հունիս 2024թ:

2. Ծրագրի նախագծային արժեքը - Համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման նախագծանախահաշային փաստաթղթերի արտաքին համակարգի բարելավման արժեքը կազմում է 186 447,38 հազար դրամ, բաշխիչ ցանցի բարելավման արժեքը՝ 184 964,11 հազար դրամ, ընդհանուր նախագծային արժեքը կազմում է 371 411,49 հազար դրամ:

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը – Կապան համայնքի Արծվանիկ ազդակիր գյուղն ունի խմելու ջրամատակարարման խնդիր: Բնակչության 50%-ն է ապահովված 24 ժամյա ջրամատակարարմամբ, հիմնականում գյուղի ներքևի հատվածը: Բնակչության 50%-ը ձմռան ամիսներին ունենում է 7-8 ժամ ջրամատակարարում, իսկ ամռան ամիսներին՝ լավագույն դեպքում՝ 3-4 ժամ: Իրավիճակն ավելի է վատացել վերջին տարիներին՝ կտրուկ տաքացմամբ պայմանավորված:

4. Ծրագրի նպատակը – Արծվանիկ գյուղի ամբողջ բնակչությանը խմելու ջրով ապահովելն է:

5. Ծրագրով հաստատված վերջնական ակնկալվող արդյունքները – Բարելավված ջրամատակարարման համակարգ՝ մոտ 400 բնակիչների համար /123 տնային տնտեսություն/:

6. Ծրագրի փաստացի արդյունքները – Ծրագրի ավարտից հետո՝ ապահովված ջրամատակարարում:

7. Ծրագրի շահառուները – Ծրագրի ուղղակի շահառուներ են հանդիսանալու Արծվանիկ գյուղի 755 բնակիչներից 400-ը, 123 տնային տնտեսություն: Ձրի ավելացմամբ պայմանավորված, ծրագիրը դրական ազդեցություն կունանա նաև գյուղի ողջ բնակչության, ինչպես նաև գյուղի դպրոցի, մանկապարտեզի և տարեցների կենտրոնի համար:

8. Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները – Ծրագրի շրջանակում նախատեսվում է ապահովել Արծվանիկ բնակավայրի խմելու ջրամատակարարումը: Արծվանիկն ազդակիր բնակավայր է, այստեղէ գտնվում տարածաշրջանում ամենամեծ պոչամբարը: Ծրագրի իրականացմամբ լուծվում է կենսական նշանակության խնդիր, որը ներկա պահին ազդակիր բնակավայրերի ամենաառաջնահերթ խնդիրն է:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը - Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 325 889,5 հազար դրամ, այդ թվում 322999,5 հազար դրամ՝ շինարարական աշխատանքներ, 1000,0 հազար դրամ՝ հեղինակային հսկողություն, 1890,0 հազար դրամը՝ տեխնիկական հսկողություն:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացվել են 73104,304 հազ. դրամի աշխատանքներ:

2024 թվականի մասհանումների գումարը կազմում է 251092,8 հազար դրամ:

2. Ծրագրի փաստացի շահառուները – Ծրագրի փաստացի շահառուները հնարավոր կլինի նշել ծրագրի ավարտից հետո:

3. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները – Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, իրականացվել են 73 104,304 հազար դրամի աշխատանքներ, հիմնականում՝ <<Արտաքին ցանցի բարելավում>> աշխատանքներից քանդման, հողային, շինարարական և տեխնոլոգիական աշխատանքները:

4. Ծրագիրն իրականացնող և աջակցողները – Պատվիրատուն Կապանի համայնքապետարանն է, շինարարական աշխատանքներն իրականացնում է <<ԱրտՊլաս>> ՍՊ ընկերությունը, տեխնիկական հսկողությունը՝ <<Սամալիա>> ՍՊ ընկերությունը:

5. Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը – Փաստացի վերջնական արդյունքները հնարավոր կլինի նշել ծրագրի ավարտից հետո:

6. Հաշվետվության հրապարակումը – Կապան համայնքի ավագանու հերթական նիստի օրը՝ 11 փետրվար 2025թ:

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ*

11 փետրվար 2025թ